UNIVERSAL CREDIT

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ

Բանկի կողմից տրամադրված կամ տրամադրվելիք վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է համաձայն «Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ» Կանոնակարգ 8/01-ով սահմանված կարգի: Վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար հիմք է ընդունվում «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բանաձևը՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը հաճախորդի վարկավորման ընդհանուր ծախսն է՝ արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսադրույքով, և որն իր մեջ ներառում է բոլոր տեսակի տոկոսներն ու այլ վճարումները, որոնք հաճախորդը պարտավոր է վճարել վարկի ստացման և վարկի գործողության ամբողջ ընթացքում:

A - հաճախորդին տրամադրվող վարկի պայմանագրային գումարն է,

n - հաճախորդի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ վարկի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համարն է: Ընդ որում, մեկ օրվա ընթացքում վարկի մայր գումարի, տոկոսագումարների և(կամ) այլ վճարումների կատարումը համարվում է մեկ վճարում:

N - վարկի մարմանը (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) ուղղված վերջին վճարի համարն է (ներառյալ նաև վարկի ստացման պահին կատարվող վճարը), որից հետո հաճախորդի կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները համարվում են մարված:

Kn - հաճախորդի կողմից մինչև վարկի ստացման պահը, վարկի ստացման պահին և (կամ) վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝ n-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ):

Dn - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառվող այլ վճարները ներառում են հաճախորդի կողմից վարկի ստացման համար պարտադիր կատարման ենթակա վճարները համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ» Կանոնակարգ 8/01-ի:

<u>ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ</u>

Օրինակ 1

Սպառողական վարկի պայմանները՝
Տրամադրվող գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
Անվանական տարեկան տոկոսադրույք (հաստատուն)՝ 22%
հաշվարկված վարկի մնացորդի վրա
Մարման ժամկետ՝ 24 ամիս կամ 730 օր
Մարման կարգ՝ ամսական հավասարաչափ մարումներ (անուիտետային):
Տրամադրման վճար՝ 25,000 ՀՀ դրամ,
Կանխիկացման վճար՝ 10,000 ՀՀ դրամ,
Ամսական սպասարկման վճար՝ 5,00 ՀՀ դրամ,
Վարկի տրամադրման օր՝ 15 Փետրվարի, 2011թ.
Առաջին մարման օր՝ 15 Մարտի, 2011թ.
Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 30,4%

Օրինակ 2

Սպառողական վարկի պայմանները՝

Տրամադրվող գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
Անվանական տարեկան տոկոսադրույք (հաստատուն)՝ 22
հաշվարկված վարկի մնացորդի վրա
Մարման ժամկետ՝ 12 ամիս կամ 365 օր

UNIVERSAL
CREDIT

Մարման կարգ՝ ամսական ոչ հավասարաչափ մարումներ (վարկի հիմնական գումարը մարվում է հավասար ամսական վճարներով, իսկ հաշվեգրված տոկոսների գումարը նվազում է հիմնական գումարի մարմանը զուգընթաց):
Տրամադրման վճար՝ 10,000 ՀՀ դրամ,
Վարկի տրամադրման օր՝ 15 հունիսի, 2011թ.
Առաջին մարման օր՝ 15 հուլիսի, 2011թ.
Տարեկան փաստացի տոկոսադրույքը՝ 24,33%